

2760

Թուրքիայի Կ.

Ազատագրված

Հանրապետություն

1922

9(47.925)

Թ-29

2012

9167.925)

48

Բ-29

Պայտարանի բոլոր եղբակերի միացիկ!

ՄՆ. ԹԱԻԱՎԱԼԵԱՆ

ԱԶԱՏԱԳՐԻԱԾ ≡
≡ ≡ ≡ ԶԱՆԳԵԶՈՒՐ

ԳՈՐԻՍ — 1922 թ.

ԱԳ
2007
ԳՓ

8147.3257
P-29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊՐԵՍՏԱԿԱՆ ՍԵՐՅԱԿՆԵՐԻ
ՆՈ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊՐԵՍՏԱԿԱՆ ՍԵՐՅԱԿՆԵՐԻ

ԽՆԶ ԵՐ ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԶԱՆ-
ԳԵՋՈՒՐՈՒՄ

Լրանում է արգելն մի տարի այն օրից,
երբ ազատագրվեց Չանդի գուրբ դաշնակիների դա-
ժան լծից:

Մի ծանր տարի և հիմա ասես թէ մի դրժ-
ւար սար ենք բարձրացել:

Ես նայինք տեսնենք, թէ ինչ ենք թողել
մեր ետևը՝ ցածում և ինչ ենք արել մեր ճա-
նապարհի վրա:

Մի տարի առաջ Չանդեգուրբ գժոխային
դրուժեան մեջ էր Գաշնակները ամեն կողմից
վանդակել եկել էին Չանդեգուրբ:

Հառաքած իրենց ուժերի բեկորները—բո-
լոր մատուցելիս անհերքելի շնորհակալությամբ՝ նրանք փա-
կել էին Չանդեգուրբի դռները և իշխում էին:

Նրանց նպատակն այստեղ պարզ էր:
Ուզում էին Չանդեգուրբի աշխատարք գիւղա-
ցիութեան վզին նստած, նրա Չանքերով, նրա
արիւնով նորից տարածեն իրենց անարգ իշխա-
նութիւնը ամբողջ Հայաստանի վրա և ապա նո-
րից շահաւէտ խաղալիք դարձնեն հայ ժողովր-
դին Սնտանտալի և իրենց համար:

Քեանի ազատամբռութիւնը Ղարաբաղում,
Բեդլեանի արշաւանքը Գարալագեազ ու Բայազէթ
հաստատում են այս նպատակները: Երևանում
ամրացած Հայաստանի խորհրդային կառավա-



1964 թ. 109-100 է

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊՐԵՍՏԱԿԱՆ ՍԵՐՅԱԿՆԵՐԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ

108522-42

1012-2010

բութիւնը չէր կարող հանգիստ խղճով նայել
Չանգեզուրի աշխատուար գիւղացիութեան այս
ոտսկալի կացութեանը:

Սակայն զգալով, որ նորանոր կռիւները ա-
ւելի կը քայքայեն գիւղացիների առանց այն էլ
քայքայւած տնտեսութիւնը՝ Հայաստանի կա-
ռավարութիւնն առաջարկում է զաշնակներին
խաղաղ միջոցներով լուծել բոլոր խնդիրները և
չբռնանալ ժողովրդի կամքի վրա:

Դաշնակները նորից բոլշևիկներին վրա հնա-
րած հազար ու մի շինծու լուրեր տարածելով
ժողովրդի մէջ-բռնակցութիւններին՝ պատասխա-
նում են արշաւանքով դէպի Դարալագեազ: Իսկ
պարոն սպարապետ Նժդեհը արջտարանում է ու
ճղաւում. «Թող գան, շատ գան, շուտ գան»:

Մտորդալիկ կառավարութիւնը տեսնում է,
որ «սապատաւորին գերեզմանը կուղղի» ու-
ղարկում է կարմիր Բանակը Չանգեզուրի գիւ-
ղացիութեանը օգնութեան: Մեր բախտից և պա-
րոն սպարապետի չար բախտից կարմիր Բանա-
կը շատ եկաւ և շուտ եկաւ: Չանգեզուրն ա-
զատազրեց մատուցելու թալանչիւններից:

ԻՆՉ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԷՉ ԷՐ ԶԱՆԳԵԶՈՒԻՐԸ

Ա.ԶԱՏԱԳՐՈՒՄԻՑ Ա.Ռ.Ա.Չ

Դաշնակցութիւնը իրոտանում էր ժողովր-
դին տալ անկախութիւն, ազատութիւն, հան-
գատութիւն, բայց երբէք չուէց իր իշխանու-
թեան ամբողջ ընթացքում և չէր էլ կարող տալ:

Դաշնակներին իսկի ձեռնառու էլ չէր այս,
քանի որ ձուկ սրտալու համար պղտոր Չուրն է
լաւ: Սրա համար էր, որ նրանք սկզբից ի վեր
անդադար հայ գիւղացուն կուեցնում էին թուր-
քի հեռ և աղա իրը թէ իրենց «քաջութիւնով»
տնադին դոճերի գնով աղատում, փրկում»:

Երեք չորս տարի շարունակ Չանգեզուրը
անասելի կռիւների մի դժոխք էին դարձրել:

Մի երկիր, որ նայելիս հացարայտերի մը-
չակման տեսակէտից աղքատիկ է, կարւած ոչ
միայն ամբողջ աշխարհից, այլ և իր հեռ սերտ
կող ունեցող մտաւիա շրջաններից, ինչպիսի
քայքայման, ինչպիսի աղքատացման կենթարկ-
վէր: Դաշնակները թողել էին կիսաւեր, կատար-
եալ թշուաութեան հոտած մի երկիր և արիւ-
նաբամ, հիւժուած ու սովի մատնուած մի ժո-
ղովուրդ:

Եւ ինչպիսի փախչելուց ստաջ, նախապէս
չէին պրացել, ինչպէս միշտ, կողոպտել, թալա-
նել ու ամեն ինչ տանել իրենց հեռ Պարսկաս-
տան:

Եւ անա այսպիսի սոսկալի վիճակի հառած
Չանգեզուրը, որի վրա սկզբից ի վեր սովի ու-
րակման էր սաւառնում, պէտք էր կեանքի կան-
չել, կենդանացնել, օգնել, կազմակերպել ու
կառավարել:

Հայաստանի խորհրդային կառավարութիւնը
իր ամենաջերմ ուշադրութիւնը դարձրեց Չան-
գեզուրի վրա:

Աշխատաւոր ժողովրդի շահերին նւիրած կոմունիստական կուսակցութիւնը արհամարեց ամեն մի դժուարութիւն և հանդէս բերաւ անսահման նւիրածութիւն և անճնազոհութիւն գործի մէջ:

ՍՄԵՆԻՑ ԱՌԱՋ ԻՆՉ ԷՐ ՀԱՐԿԱԻՈՐ ԶԱՆԳԵԶՈՒՐԻՆ

Ամենից առաջ Զանգեզուրի ժողովրդին հարկաւոր էր խաղաղութիւն:

Երեք չորս տարի զանգեզուրցին գրեթէ ոչ մի օր խաղաղ ապրելու յոյս անգամ չի ունեցել:

Զանգեզուրցուն հարկաւոր էր ազատել «դիրքից», ուր գիշեր ցերեկ տանջոււմ էր նա: Հարկաւոր էր, որ նա նւիրելի իր վար ու ցանքսին, իր առօրեա հոգսերին ու պէտքերին:

Եւ խորհրդային իշխանութիւնը բերաւ այդ ջերմ ցանկալի խաղաղութիւնը:

Սա խորհրդային իշխանութեան առաջին օգնութիւնն էր Զանգեզուրի աշխատաւոր գիւղացիութեան:

Դաշնակները Զանգեզուրը դարձրել էին մի հսկայական բանտ: Երեք չորս տարի մեր գիւղացիութիւնը բնտարկուած էր այս սոսկալի քարաժայռերի ու քարափների մէջ: Այսպէս էին արել այն մարգիկ, որոնք զանգեզուրցուն կուեցնում էին «ազատութեան» համար: Սա մի սարսափելի ծաղր էր: Հարկաւոր էր Զանգեզուրի փակ դռները բացել, որ մեր գիւղացին լոյս աշ-

խարհ գուրս գա դաշնակների ստեղծած անիծւած բանտից: Հարկաւոր էր, որ զանգեզուրցին յարաբերութիւններ և փոխանակութիւն ունենա իր հետ անտեսապէս շաղկապուած հարեան և ապա աւելի հեռաւոր շրջանների ու գաւառների հետ:

Եւ մանաւանդ հարկաւոր էր փոխադարձ անսասան համերաշխութիւն սահմանել հայ և թուրք գիւղացիութեան միջև: Առանց այս համերաշխութեան, առանց այս երկու տարրերի համերաշխ փոխյարաբերութիւնների և համագործակցութեան չի կարող ապրել ու բարգաւաճել Զանգեզուրը, բանտ կդառնա նա, ինչպէս որ բանտ էր: Այս տարի թրքական շրջաններից ներմուծուած հազարաւոր փթերով բրինձն էր, որ սուլտանոյ սովի թևերը ջարդեց:

Եւ խորհրդային իշխանութեան երկրորդ մեծ օգնութիւնը՝ Զանգեզուրի սահմանները բանալն ու թուրք հարեանների հետ համերաշխութիւն հաստատելն էր:

ԱՆՀՐԱՑԻՄՆ ԷՐ ՆԱԵԻ ՊԵՏԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻԻՆ

Սակայն ընդհանուր վիճակը զալիս էր հաստատելու, որ հարւածների հեռքերը խոր են, որ քայքայումը կատարեալ է, որ անհրաժեշտ է նաև պետական լայն օգնութիւն, առանց որի դժուար կլինի ժողովրդին կորստից փրկել:

Հարկաւոր էր զրսից ապրանքներ, ներմուծել: Եւ Հայաստանի խորհրդային կառավարու-

թիւնը չզրացաւ առաջին հերթին հարիւր հազար արշին մանուֆակտուրա ներմուծելու Չանգեգուր: Ճիշտ է մերկութիւնը սաստիկ էր, կարիքի հետ համեմատած հարիւր հազար արշինը քիչ էր, բայց եթէ հաշւի սունենք, որ վերջին տարիների ընթացքում գրեթէ ոչ մի արշին կտորեղէն չէր ներմուծւած՝ սա արդէն զգալի մի օգնութիւն էր:

Այս մանուֆակտուրայից սոցիալական ապահովութեան բաժնի միջոցով ձրի կերպով բախշւած է որբերին, քաղաքացիական կռիւների ընթացքում սպանւածների ընտանիքներին, աղքատ գիւղացիներին, զաղթականներին, յղի կանանց, չքաւոր ամուսնացուներին և այլն 7898 արշին: Իաշնակների կողմից սպանւած և թաւանւած կոմունիստների ընտանիքներին՝ 7890 արշին: Լուսբաժնի միջոցով հագուստ է բաժանւած մօտ 1200 աղքատ աշակերտների: Գորիսի որբանոցի համար կարծած է հարիւր կոմպլեկտ հագուստեղէն և անկողին:

Ղափանի որբանոցին բաց է թողնւած հազար արշին նոյն նպատակով: Տրւած է նաև միլիցիաներներին, սլաշտօնեաներին և այլն: Հիւանդանոցի համար պատրաստւած 60 մահճի թէ անկողին թէ սպիտակեղէն: Մանուֆակտուրայից մէկ մասը փոխանակւած է սերմացւի հետ, որը բաժանւած է անսերմ գիւղացիութեանը:

ԲՅՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԵՂՕՐԱՅՔ

Քայքայումը, սոփն ու մերկութիւնը, որ

առաջացրել էին զաշնակները Չանգեգուրում, իրենց ետեից բերել էին հիւանդութիւններ: Համաճարակները տարածուած էին: Ինչորայք չը կային Չանգեգուրում: Եղածն էլ զաշնակները թախանել տարել էին Պարսկաստան: Ղափանի հիւանդանոցն ամբողջապէս կոդոպուած էր:

Հարկաւոր էր անսիջապէս կազմակերպել բժշկական օգնութիւն: Հարկաւոր էր դեղորայք հասցնել:

Եւ ահա Հայաստանի խորհրդային կառավարութիւնը ուղարկում է մեծ քանակութեամբ՝ մօտ 130 փութ դեղորայք, ինչպէս և բժիշկներ: Անսիջապէս բացւում են նորից հիւանդանոցները, ամբուլատորիաներն ու դեղատները Մեղրում, Ղափանում և Գորիսում:

Ամբողջ գաւառում սկսում են աշխատել 8 բժշկներ և մի քանի բուժակներ: Չհաշւած գիւղերում և այն շրջաններում, որտեղ հիւանդանոց չկա, հասցրւած բժշկական օգնութիւնը՝ հիւանդանոցներից և ամբուլատորիաներից օգտւել են հետեւեալ քանակութեամբ հիւանդներ. 1921 թ. սեպտեմբեր ամսից մինչև 1922 թ. ապրիլ 1-ը 1) Գորիսի հիւանդանոցներից (40 մահիճ) 449 հոգի, 2) Գորիսի ամբուլատորիայից 3730 հոգի, 3) Ղափանի հիւանդանոցից 2134 հոգի և այլն: Ընդհանուր հաշւով բացի Մեղրու շրջանից մօտ տասը հազար մարդ բժշկական օգնութիւն և դեղորայք է ստացել Չանգեգուրում 1921 թ. սեպտեմբերի 15-ից մինչև 1922 թ. ապրիլի 1-ը:

ՊԱՅԲԱՐ ՍՈՎԻ ԴԷՄ

Սակայն խորհրդային իշխանութիւնը իր ամենալուրջ և ամենաէական ուշադրութիւնն անշուշտ պիտի դարձնէր սովի դէմ պայքարելու գործի վրա:

Զանգեզուրը հին ժամանակից արդէն միայն իր հացով չի կարողացել բաւարարել շնորհիւ իր հողամասերի սակաւութեան և անբերրիութեան:

Այդ էր պատճառը, որ Զանգեզուրը բազմաթիւ բանւորներ էր տալիս քաղաքներին և մասնաւորապէս Բագին: Վերջին տարիներին կոիւնները զանգեզուրցուն հնարաւորութիւն չէին տւել հարկաւոր չափով ցանելու: Սրա վրա աւելացել էր նաև 1921 թ. բերքի չափազանց սակաւութիւնը: Շատ շրջաններում արտերը չէին տւել նոյնիսկ շաղ տւած սերմացւի կէսը: Տարիների չեզոքացումն էլ պակաս չէր ազդել մթերքների քշութեան վրա: Հարկաւոր էր դաշնակներից ազատագրւած Զանգեզուրը փրկել սովից:

Եւ Հայաստանի խորհրդային կառավարութիւնը այստեղ էլ չզլացաւ իր սուղ միջոցներից բաժին հանել սոված Զանգեզուրին: Զանգեզուրի սովեալներին օգնելու համար կազմեց Արտակարգ Եռեակ, որը եռանդուն միջոցների դիմեց: Կենտրոնական իշխանութիւնը Արտակարգ

Եռեակին ուղարկեց տասն ու վեց վագոն ալիւր, ցորեն և այլն: Դժբախտաբար այս մթերքներից մէկ մասը պետական տրանսպորտի բացակայութեան պատճառով ծախսեց Եւլախից տեղափոխման համար: Արտակարգ Եռեակը իր Գորիսի պահեստներից առաջին հերթին յատկացրել է ալիւր՝ Ղափանին՝ 501 փութ Սիսեանին՝ 200 փ. Հալիձորի շրջանին՝ 100 փ. Տեղի շրջանին՝ 150 փութ քաղաքի շրջանին՝ 120 փ.: Սոցիալական ապահովութեան միջոցով մինչև ապրիլ 25-ը բախշւած է մօտ 700 փութ: Ամենից մեծ ու շաղրութիւնն այս տեսակէտից բնականաբար վարձւած է եղել Ղափանի վրա: Սովը Ղափանում սոսկաւ չափերի էր հասել: Պատահել են նոյնիսկ սովամահութեան դէպքեր: Բացի Գորիսից ճամբած 501 փութից Ղափանին Զուլֆայից տրւած է նաև չորս վագոն, որից մի վագոն փոխարինաբար վերցրել են մեղրեցիները, որ երևի կվերադարձնեն:

Բացի այս Ղափանը ստացել է Հայաստանի օգնութեան կոմիտէի միջոցով նաև մի քանի հարիւր կոմպլեկտ շորեղէն:

Սիսեանն ստացել է նաև Նախիջևանից երկու վագոն ցորեն:

Այս զգալի օգնութիւնը Զանգեզուրի ժողովրդին բերաւ հասցրեց զրեթէ նոր բերքին: Զանգեզուրի զիւղացիութիւնը փրկւելով դաշնակներից ազատեց նաև սովի ճիրմաններից:

ՍԵՐՄԱՆՄԱՆ ԳՈՐԾԸ ԵՒ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԸ

Սափայն Զանգեզուրի խորհրդային իշխանութիւնը իր նպատակն էր զրել ոչ միայն այս տարի օգնութիւնը կազմակերպելով սովին յաղթահարել, այլ նա որոշել էր արմատախիլ անել սովը Զանգեզուրից:

Իսկ սա հնարաւոր կլինէր այն դէպքում, եթէ սերմանման գործը յաջող առաջ տարւէր:

Սրա համար ահա կազմակերպուեմ է Զանգեզուրում Սերմանման կոմիտէ, որն իր ճիւղերն է հաստատուեմ շրջաններում և գիւղերում:

Սկսուեմ է սերմի բաշխումը անսերմ գիւղացիութեանը: Իր չափազանց սուղ միջոցներից Սերմկոմը յամենայն դէպս կարողանուեմ է մօտ 6500-7000 փութ սերմացու բաշխել գիւղացիներին, արտելներին, պաշտօնեաներին:

Այս տարւայ սերմանման գործը Զանգեզուրում ընդհանրապէս կարելի է շատ յաջող համարել: Իժբախտարար դեռևս ճշգրիտ թւեր չկան, բայց ընդհանուր սուամբ բոլոր տեղիակ և գիտակ անձնաւորութիւնները պնդուեմ են, որ ոչ մի տարի Զանգեզուրում այս տարւայ ցանքսը չի եղել: Իմբողջ Զանգեզուրում թերևս մատների վրայ կարելի է համրել այն մարդկանց, որոնք որոշ չափով ցանքս արած չլինեն: Սովի խստութիւնն իսկ հաստատուեմ է այն, որ գիւղացիութիւնն իր ամբողջ ունեցածը ցանել է:

Մի ուրիշ հանգամանք ևս, որ զարկ է տւել սերմանման գործին: Դա հողային հարցի պարզ լուծումն է: Դաշնակների հողային քաղաքականութիւնն այն էր, որ նրանք նոր կալւածատէրեր էին ստեղծուեմ իրենց խմբապիաներից այն տեղերում, որտեղ կալւածատէրեր թերևս չեն եղել: Դաշնակների ժամանակ բոլորովին հողագուրկ գիւղացիներ շատ կային: Հողը մասնաւոր սեփականութիւն էր հաշուեմ սրա կամ նրա և նոյնիսկ այնպիսի մարդկանց, որոնք իրենց ամբողջ կեանքի ընթացքում հող մշակած չկային: Խորհրդային իշխանութիւնը հողահաւասարութիւն առաջ բերեց: Գրեթէ ամենուրէջ անհող գիւղացիներն ստացան հողամասեր ըստ շնչին հասանելիք նորմայի: Հէնց օրինակ Գորիսի շրջակայքում գտնուող հողամասերը: Կային մարդիկ, որոնք դաշնակների ժամանակ աճուրդով գնել և դաթել էին մի քանի բերրի հողամասեր, նոյնպէս կային մարդիկ, որոնք ոչ մի ագրէլ էլ չուներին աշխատանքի: Հողագուրկներն էլ ստացան հողեր և ցանեցին: Նոյնը և գիւղերում:

Սափայն չպէտք է մոռանալ մի ուրիշ հանգամանք, որ նոյնպէս էական է: Դա այն է, որ գիւղացիութիւնն առհասարակ հատիկը հողի մէջ է շաղ տալիս այն ժամանակ, երբ լիայոյս է, որ բերքն ինքն է ստանալու, երբ գիտէ, որ տարին բոլորելու է խաղաղ:

Դաշնակների ժամանակ, երբ ամեն ինչ յեղյեղուկ էր, երբ գիւղացին խորապէս հաւա-

տացած չէր, որ իր ցանածը հնձելու է, անշուշտ նա շատ չէր ցանի:

Իսկ հիմա խորհրդային իշխանութեան հովանու տակ, խաղաղ աշխատանքին նւիրւած գիւղացին անշուշտ մէկ միտք կարող էր ունենալ՝ ցանել և ցանել:

Մնում է այժմ, որ բերքը լաւ լինի. իսկ նա առայժմս խոստանում է լաւ լինել:

**ԴԱՇՆԱԿՆԵՐԸ ՔԱՆԴՈՒՄ ԷԻՆ, ԻՍԿ ԿՈՄՈՒ-
ՆԻՍՏՆԵՐԸ ՇԻՆՈՒՄ ԵՆ.**

Իրենց տիրապետութեան ժամանակ Զանգեզուրում դաշնակները երեւի բացի մի էանի դիրքերից ուրիշ ոչինչ շինած չկան, բայց քանդիլ են հարիւրաւոր գիւղեր: Խաղաղ աշխատանքին նւիրւած մեր գիւղացիութիւնը չնայած սոսկալի պայմաններին կարճ ժամանակաւ ընթացքում ահադին շինարարական գործ կատարեց:

Չկայ ամբողջ Զանգեզուրում մի գիւղ, որտեղ գիւղացիներն այս տարի կոմբլիջների զեկավարութեամբ շաբաթօրեակների ու կիրակնօրեակների միջոցով շինած չլինեն կամ որ-նէ հասարակական ճանապարհ կամ գիւղի համար որնէ աղբիւր կամ ջրաղաց, սրանոց, կամուրջ և կամ վերանորոգած չլինեն դպրոցի, թատրոնի և այլ շէնքերը:

Որտան գետի վրայ չլինել են մի քանի կամուրջներ, ինչպէս և Օխլի գետի վրայ (հանքերում) մէկ հիմնաւոր կամուրջ է շինուել:

Ահուզի, Վահուզի, Որոտ, Սիսեան, Շաքի և այլ սրանց նման տասնեակ մեծ գիւղեր հիմնայտակ քարուքանդ են արել դաշնակները, սակայն խորհրդային իշխանութիւնը վերականգնեց այդ գիւղերը: Դեռ շարունակուում են մրջնային աշխատանքներն այս գիւղերում: Փլատակները վերականգնում են:

Բազարչայը՝ որ կուլտուրական մի անկիւն էր, թալանւեց և աւերւեց դաշնակների կողմից. այժմ վերականգնած է:

Հանքերի գործարանները, որ համակովկասեան հարուստութիւն են, նոյնպէս թալանւեցին, փառաւոր շինութիւնները քար ու քանդ արւեցին դաշնակցական հորդաների կողմից: Իսկ խելագար պարոն սպարապետը չմոռացաւ փախչելիս պայթեցնել մէկ թնդանօթ, որպէսզի հանքերի բոլոր շինութիւնների ապակիները ջարդուեն: Մի խօսքով երեք չուս տարի շարունակ անխղճօրէն քանդել են դաշնակները մեր երկիրը և երեւի հարկաւոր է նոյնքան ժամանակ, որ մենք վերաշինենք նրանց քանդածները:

ԼՈՒՍԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԸ

Եթէ առաջները որոշ չափով Զանգեզուրի ժողովուրդը հեռակիրս է եղել ուսմանը՝ ապա դաշնակների վայրագութիւնների ժամանակ ինչ ասել կուզի, որ ուսման գործը բոլորովին մոռացւած է եղել. քանզւած են եղել դպրոցական շէնքերը, դպրոցներն ու գրադարանները:

թալանած: Դաշնակ ինտելլիգենտները, „փարձապետները“ միայն բամբասել գիտէին բաշխիչներէ մասին, թէ նրանք կու լուտորա կան չեն, բայց հէնց սկզբի օրերէց խորհրդային իշխանութիւնը ձեռնամուխ եղաւ նաև ուսման գործը կանոնաւորելու:

Անշուշտ մէկ տարւայ ընթացքում չտիրազանց աննպաստ պայմաններում հրաշքներ չէր կարելի գործել այս ասպարեզում եւս, սակայն այն ինչ որ կատարւած է ցոյց է տալիս յաւաջադիմութիւն: 1921—22 ուսումնական տարւայ ընթացքում բացւած և գործել են

- 1) Գորիսի շրջանում 7 դպրոց
- 2) Տեղւայ „ „ 5 „ „
- 3) Հալիձորի „ „ 4 „ „
- 4) Սիսեանի „ „ 18 „ „
- 5) Ղափանի „ „ 28 „ „

Ընդամենը 63 դպրոցներ:

Բոլոր շրջաններին բաց են թողնւած դասագրքեր 2170 հատ, տետրեր 2960հ. ինչպէս և մատիտներ, գրչածայրեր, գրչակոթեր և այլն:

Գորիսում կազմակերպւած է ընդհանուր բանւորական գրագարան մօտ 10,000 օրինակ գրքերով: Շրջաններում՝ խրճիթ-ընթերցարաններ, որոնց ուղարկւած են գրքեր—Սիսեանին՝ 3505 կտոր, Ղափանին՝ 1576 կտոր, Տեղի շրջանին՝ 180 կ. Հալիձորի՝ 250 կ. Քաղաքի՝ 2148 ընդամենը 6660 կտոր գիրք:

Նոյնիսկ ձեռնարկւած է անգրագիտութեան

դէմ պայքարելու. գործին այսպիսի սոսկալի հանգամանքներում:

Հասակաւոր անգրագէտների դպրոցներ կան մի քանի դիւղերում ինչպէս օրինակ Ուրղունի շէնում, Երիշէնում, Մաղանջուղում, տեղական վաշտում և այլն:

Դաշնակ խմբապետները այս կամ այն գիւղում միայն քէֆեր և օրգիաներ էին սարքում, իսկ այժմ մեզ մօտ քիչ են այնպիսի գիւղերը, որտեղ հաւաքոյթի սենեակներ, թատրոններ և ընթերցարաններ չլինեն:

Իհարկէ դեռ կատարելութիւնից հեռու է այս բոլորը, սակայն էականը անտեսութեան վերականգնումն է, որից յետոյ լուսաւորութեան գործը աւելի լաւ հիմքերի վրայ կը դրւի:

ԺՈՂՈՎՐԳԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Դաշնակները մշտապէս խօսել են ժողովրդի անունից, բայց նրանց իշխանութիւնը եղել է կամայականութիւնների, քմահաճոյքների, բռնութեան ռեժիմ և ոչ թէ ժողովրդական իշխանութիւն: Այս կարելի է հաստատել բազմաթիւ փաստերով: Ամեն մի խմբապետ, ամեն մի մատուցերիստ իրեն երևակալում էր որպէս խան, իսկ պարոն սպարապետ Նժդեհը հէնց ինքն իրեն «փաշա» ու «փաղիշահ» կոչեց: Ով ինչ ցանկանում էր՝ անում էր և բոլորը միասին ժողովրդի անունով թալանում ու լլկում էին նոյն ժողովրդին: Հէնց միայն Զանգեզուրից փախչելիս

նրանք Պարսկաստան են անցրել ու ծախել մօտ 4—5 հազար ձիեր, իսկ ոսկիները, գորգերը կոփերը, թնդանօթները, գնդացիները կային և այլն:

Սրանք բոլորը ժողովրդական հարստութիւն էին:

Դաշնակ մաուզերիստը սրտեղ պատահում էր տեղն ու սեղը գնդակահարում էր հայ կոմունիստ գիւղացուն կամ բանուորին:

Գրեթէ ոչ մի ձոր չկայ Չանգեզուրում, որտեղ կոմունիստի արիւն թափւած չլինի, իսկ Տաթևի ձորը հարիւրաւոր կոմունիստների գերեզման դարձաւ:

Այսուհետև ամեն մի գիւղացի Տաթևի ձորի մօտով անցնելիս անէծքով պիտի յիշի դահիճներին:

Այս բոլոր գոհերը անողոքաբար պահանջեցին մեզնից, որպէսզի հաստատուի ժողովրդի իշխանութիւնը:—Սորհրդային կառավարութիւնը, որը նոյն ինքը ժողովուրդն է ընտրում-գիւղական ժողովներում՝ գիւղական խորհուրդները, ապա շրջանային համագումարները, գործկոմները և այլն:

Այստեղ կոմունիստի կողքին նստած է և անկուսակցական գիւղացին, որը նւիրւած և ազնիւ քաղաքացին է խորհրդային իշխանութեան: Այս է պատճառը, որ խորհրդային իշխանութիւնը վերականգնում, շինում և ստեղծագործում է, իսկ մաուզերիստ դաշնակները միայն քանդում էին:

ՅԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻՋՆԱԲԵՐԴԸ

Ի հարկէ թաւրիգ փախածները դեռ շուտ չեն կարող մոռանալ իրենց կամայականութիւնների երանելի օրերը: Ի հարկէ դեռ նրանք պիտի երազեն նորից հասնելու անցեալ ախրահոշակ փառքին: Աւագակի ճանկն ընկած թաւներ շուտ է վերջանում և նա մտածում է նորից նոր աւագակութիւն անել: Հակայեղափոխականները սրանից առաջ համարում էին Չանգեզուրը որպէս միջնաբերդ Անդրկովկասի հակայեղափոխութեան: Այստեղ էին ուզում մի ժամանակ հաւաքել միանալու իրար և մուսաւթիստներն ու մենշևիկները: Նոյնիսկ անգլիացիներն իրենց ներկայացուցիչն էին ուղարկում: Եւ այժմ էլ թաւրիգում և այլ ուր մեր ժողովրդի արիւնոտ ոսկիներով քէֆ անող դաշնակները երազում են Չանգեզուրի մասին և յոյս են դնում մի քանի տակաւնքների վրայ: Սակայն թող լաւ իմանան նրանք, որ նրանց սոսկալի լծից ազատագրւած Չանգեզուրն այժմ յեղափոխութեան միջնաբերդն է:

1018-2010



Գ Ի Ն Ն Է 5 Կ.



200

000

1 200

մամ



120244526

2760

200

2013

MAY 2001

= MAY 2000

« Ազգային գրադարան »



NL0244526

